ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 287 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՇՈՑՔ), ՈՐԻ ՎՐԱ ԱՌԿԱ Է ԵՂԵԼ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՏՈՆԱԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 72 որոշումը և հաշվի առնելով, որ և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Տիգրան Տոնականյանը, իր 2019 թվականի դեկտեմբերի 12-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Աշոցք համայնքի սեփականությունը համարված **176.12** քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի շինության (նկուղ՝ 88.06 քառակուսի մետր, ավտոտնակ՝ 88.06 քառակուսի մետր) և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0033-0005 կադաստրային ծածկագրով **0.024828** հեկտար մակերեսով հողամասի (վկայական N 10122019-08-

0045, անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, ավտոտնակ 2) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը,

Որոշում եմ

1.Օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **176.12** քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (նկուղ՝ 88.06 քառակուսի մետր, ավտոտնակ՝ 88.06 քառակուսի մետր) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0033-0005 կադաստրային ծածկագրով 0.024828 հեկտար մակերեսով հողամասը (վկայական, N 10122019-08-0045, անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, ավտոտնակ 2) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով **113 246 (մեկ հարյուր տասներք հազար երկու հարյուր քառասունվեց)** Հայաստանի Հանրապետության դրամ, արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Տիգրան Տոնականյանին (անձնագիր՝ AS 0330521, բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ թաղամաս, 5-րդ փողոց, քոթեջ 1, բնակարան 2) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2019 թվականի դեկտեմբերի 16
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվականի N 288 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԿՐԱՍԱՐ, 8-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.067631 ՀԵԿՏԱՐ 08-058-0021-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԱՌՆԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գառնիկ Պապիկյանը դիմել է Աշոցք համայնք, գյուղ Կրասար 8-րդ փողոց, թիվ 3 հասցեում, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20112018-08-0036 վկայական) հողամասին կից՝ սպասարկման տարածքի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին:

Ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար քննարկվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 676.31 քառակուսի մետր (վկայական՝ N 05122019-08-0039), որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին համապատասխան՝ օտարվող հողամասը սահմանակից է ընդլայնվող հողամասին և օտարվող հողամասը կարող է կառուցապատվել օժանդակ շինություններով, օգտագործվել բացառապես ընդլայնվող հողամասի վրա գտնվող շենքի կամ շինության սպասարկման կամ դրանց վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների իրականացման համար:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում:

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի 71-Ա որոշումը.

որոշում եմ.

1. Աշոցք համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Աշոցք համայնք, գյուղ Կրասար, 8-րդ փողոց, թիվ 3/1 հասցեում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության 0.067631 հեկտար հողամասը /վկայական N 05122019-08-0039/ բնակելի տան տնամերձ հողամասի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Գառնիկ Պապիկյանին 97390 /ինսունյոթ հազար երեք հարյուր ինսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ կադաստրային արժեքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2019 թվականի դեկտեմբերի 16
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2019 թվականի N 289 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 1.9 ՀԵԿՏԱՐ (2-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՈՏՀԱՐՔ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-026-077-0001) ՂԱԶԱՆՉԻ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԷՄԻՆ ԲԴՈՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով և և հիմք ընդունելով աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող համայնքային հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 30-ի N 5 արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղում գտնվող Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1.9 հեկտար (2-րդ կարգի խոտհարք, կադաստրային ծածկագիր՝ 08-026-077-0001-ից) 3 տարի ժամկետով, ամսական 980 (ինը հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ վճարով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի գյուղի բնակիչ Էմին Բդոյանին:
2. Քաղաքացի Էմին Բդոյանի հետ կնքել խոտհարքից օգտվելու պայմանագիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 24
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2019 թվականի N 290 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 275-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի դեկտեմբերի 20-ի <<Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Կ-20122019-08-0051 որոշումը **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.13 հեկտար մակերեսով հողամասի կարգավիճակի և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին >> N 275-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվական դեկտեմբերի 27

գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2019 թվականի N 291 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ՂԱԶԱՆՉԻ, 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.1 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք Համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է Ղազանչի գյուղի բնակիչ Մեսրոպ Սամսոնի Պետրոսյանի 5 անձից բաղկացած ընտանիքը:

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ N 1328-Ն որոշման 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետով և հաշվի առնելով, որ բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով քաղաքացի Մեսրոպ Պետրոսյանի և նրա ընտանիքի անդամների 2019 թվականի դեկտեմբերի 9-ի համատեղ դիմումը՝ Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ

փողոց, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.1 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ ընտանիքի անդամների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ճանաչելու մասին,

որոշում եմ.

1. Վերականգնել իրավական հիմքերը և օրենքի ուժով ճանաչել քաղաքացիներ Մեսրոպ Սամսոնի Պետրոսյանի /ծնված՝ 1947 թվականի հունիսի 2-ին/, Անահիտ Մեսրոպի Պետրոսյանի /ծնված՝ 1980 թվականի մարտի 7-ին/, Սերվենիկ Մեսրոպի Պետրոսյանի /ծնված՝ 1982 թվականի ապրիլի 15-ին/, Արթուր Մեսրոպի Պետրոսյանի /ծնված՝ 1984 թվականի օգոստոսի 1-ին/ և Սեդա Ստեփանի Պետրոսյանի /ծնված՝ 1953 թվականին փետրվարի 18-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, բնակելի տուն 4 հասցեում գտնվող 08-075-0015-0001 կադաստրային ծածկագրով 0.1 հեկտար մակերեսով հողամասի և նրա վրա 1991 թվականին կառուցված բնակելի տան նկատմանբ:

2. Քաղաքացիններ Մեսրոպ Սամսոնի, Անահիտ Մեսրոպի, Սերվենիկ Մեսրոպի, Արթուր Մեսրոպի և Սեդա Ստեփանի Պետրոսյաններին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, բնակելի տուն 4 հասցեում գտնվող 08-075-0015-0001 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, բնակելի տուն 4:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի դեկտեմբերի 27
գյուղ Աշոցք